

ասկ կեանք կրնան վարել : Այ, ո՛չ, այս անկարելի է, զի « Որդիք հարազատք զնմանութիւն հարցն բերեն » և իրաւունք ունին :

Կ'ըսեն թէ խաչափառը իր զաւազինն օր մը կ'ըսէ թէ, « Որդեակ, ուղիղ չես քալեր » : Տես թէ այն ինչ կ'ըսէ. — կը քալեմ, կ'ըսէ, հայր, ինչպէս կը տեսնեմ որ դու կը քալես :

Հայեր, խօսքերու բազմութիւնը չէ խօսք, այլ սրտէ ճշմարիտ հայու սրտէ բղխած մի խօսքը պիտի կրընայ Հայոց զգայուն սրտերը շարժել : Ուրեմն մենք ալ կտրենք խօսքերնիս յայտնելով որ այս փոքրիկ խորհրդածութեանս եզրակացութիւնն է ցու-

ցընել մեր այժմեան թշուառ կենաց վտանգի մէջ ըլլալը, և զայն նորատեսակ, բայց երջանիկ կենաց մը փոխելու հարկաւորութիւնը զգացունենլ :

Այն որ կըզգայ և կը շարժի կ'ապրի. բայց այս կեանքը՝ անասնոց յատկացեալ է. զի նորս եւս կըզգան, կը շարժին, և հետեւապէս կ'ապրին : Խորհրդով և լաւ շարժիլը՝ կեանք է, և ճիշտ այս է մարդկան յատկացած կեանքը :

Գիտնալ, զգալ, խորհիլ, գործել և լաւ ապրիլ, ահա ասոնք են բանական կենդանւոյն երջանիկ կենաց գեղեցիկ պայմանները :

Ս. ՍԻՐԻԷ. Տ.

Ս. Ռ. Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Անի ՚ի կատար սրբանուէր սրբոյ լերինն Ձիթենի  
Յոր աստուածեանն հանդեալ երբեմն փառացն սուրբ հովանի,  
Ուր Անմահին եւ ծաւալեալ սիրոյն շնորհ կենսաբուղիս  
Հէգ մահացուաց տայր մրմնջել ՚ի ձայն անոյշ զօրհնից ուղիս :

Օրհնեալ Տէր եւ մեր Հայր  
Օրհնեալ նա յամս յամայր,  
Ալէլուք օրհնութեան  
Նմա, մինչ յաւիտեան :

Անդ ձեռն ՚ի ճնօտ գլխիկն ՚ի կախ նստեալ ՚ի կողմ սուրբ լերին  
Յոգւոց հանէր ՚ի խոր սրտէն Հայաստանցի հէք որդին,  
Ի ածեալ ՚ի յուշ նախնի զփառս իւր հայրենեացն Հայաստան  
Անոր զվայրըն յերգ սրտառուչ նորայն պանդուխտ սիրտ Հայկեան :

Եւ աչկունքն ՚ի յեթեր  
Եւ սիրան ՚ի յերեր,  
Ասէր, ել Փրկիչդ, յայց  
Յաւերս մեր հայրենեաց :

Անդանօր եւ շիթա արտասուաց հեղար իւր աչք ցօղագին  
Չնուիրականն թանայր զհօղ, կրկնեալ եւ զայս ծունկ ՚ի գետին,  
Փրկիչդ ազգաց, մոռացար՝ ահ, զհայրենիս մեր Հայաստան

Այն՝ որ ներկեաց յարիւն իւր նախ զսուրբ Խաչիդ պատուանդան :  
 Եւ արդ Տէր, եւ մեզ յայց  
 Ո՛հայր սուրբ մահացուաց,  
 Քոյդ ինչէ ցօղ գթութեան  
 Ի մեր հէք սիրաս Հայկեան :

Յիշէր եւ անդ զհայրենիս նորայն թշուառ սիրտ պանդուխտ,  
 Առ հայրենիս կրկներ անդէն ՚ի ձայն ասուր զիւր մեծ ուխտ,  
 Երդուեալ յաճիւնս իւր նախահարց քաջ եւ արի պատուական,  
 Որ սիրեցին զհայրենիս, երկիր պագին եւ մեռան :

Հայաստանն ո՛ր իմ յոյս  
 Սրտի իմն ո՛ր եւ լոյս,  
 Մոռացի ոչ երբէք  
 Զանունդ վեհ անձն իմ հէք :

Ոչ, մի շինցի բնաւ Հայաստանն, սրտիս այս լոյս կենսատու,  
 Զոր աստուածէանն ձեռն եդ ՚ի վառ լինել քեզ միշտ օրհներգու .  
 Զի որ որդի է հայրենեաց գիտացէ նա կարի քաջ  
 Թէ պսակ փառաց կայ պատրաստեալ պաշտպանողին հայրենեաց :

Եւ թշուառ սիրտ նորին  
 Լայցէ միշտ դառնադին  
 Զաղէտս իւր հայրենեաց,  
 Զաղէտս եւ իւր եղբարց :

Ո՛հ, լացին յոյժ յօտարութեան զքեզ աչկունք տխրադինք,  
 Լացին այս, եւ զողբոցն ձայն կրկնեցին ձորք եւ լերինք .  
 Լան եւ ցայսօր գորովելով ՚ի քո անունդ նուիրական,  
 Յորմէհետէ արտրեցան ՚ի սուրբ դրկացդ, Հայաստանն :

Եւ նոցայն աղալակի,  
 Հայաստանդ անուշակ  
 Այս էր ո՛հ, այս միակ  
 Երկիր մեր հարազատ  
 Թէ լիցիս երբ ազատ . . . . :

Յողբոց եհան, սաստիկ ելին հառաչք սրտին ապիկար .  
 Կրկնեաց վայրըն սուրբ զհառաչանս Հայ հէք որդւոյն եւ թշուառ,  
 Սիրտն ՚ի տրոփ զաչսն անձկայրեաց դէպ յարեւելս դարձուցեալ,  
 Յոր ընդ երկար էր քաղցր հայիլ զայս բարբառիլ եւ ողբալ :

Հայաստանն Հայաստանն,  
 Յուրբ հարց մեր օթեւանն,  
 Եւ անդէն կողկողէր  
 Զաչկունս իւր եւ փակէր :

Այս դառնադէտ վիճակ թշուառ քոց հէք որդւոց Հայաստանն,  
 Ո՛հ, յիշեցին քանիք զքեզ յերկիր օտար եւ անկան :  
 Մեռան նորա, այլ եւ ոչ մի, բարէ, գտաւ ձեռն գթոտ

Որ զնոյն զաւան փակէր, կամ արտասուէր գէթ մի որ :

Այլ անմահ էին Աջ  
Որք վտահ ՚ի սուրբ Խաչ  
Եւ ՚ի սէր հայրենեաց  
Զահեցան, պսակեաց :

1870 ԴԵԿՏԵԲԵՐ 13

Կարապետ Տ. Մինասեան :

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ա Ր Դ Ի Ի Ն Ք

« Մի լինիր գատարկանձն,  
Թեպետ և լի իցես մեծու-  
թեամբ : »

ԹԱԼԵՍ

Արարչապետան տիեզերիս Աստուած ամենակարող ՚ի փշելն իւրում զունչ կենդանի ՚ի հողաչէն պատկեր մարդոյն, նոյնն անմահական փչմամբ պարգեւեաց նմա և զհոգի և զերջանկութիւն յաւիտենական, բայց բանական արարածն՝ Նախահայրն մարդկութեան, փառասէր ոգւովն վառեալ խաբեցաւ ՚ի սատանայէ չղանգիտեալ Արարչէն, որով և մարդկութիւնն ողջոյն կորոյս զհանգիստն Իսայց գթառատ Արարիչն գթադեալ ՚ի նա՝ ոչ կամեցաւ զկորուստ նորա իսպառ, և եգ պայմանս զի եթէ ըստ այնմ գործիցէ, գոցէ գէթ զմի մասն հանգստեան, սրտուիրելով նմա քրտամբ երեսաց իւրոց ուտել զհաց, այս է պայման հանգստեան մարդոյն, զի որպէս քրտամբ է գտանել առողջութիւն բազում հիւանդութեանց, նոյնպէս և քրտամբ է գտանել զբժշկութիւն քաղցու . և բանն Պօղոսի առաքելոյն թէ՛ « Որ ոչն գործիցէ՝ և կերիցէ մի, » յանդիման առնէ մեզ

Ե

անհրաժեշտ պարտաւորութիւն մեր ունել գործունեայ կեանս՝ որով ըստանամք զկարեւորս առ հանգստութիւն կենաց, և վարեմք առողջ և սթափ կեանս : Ոչ ապաքէն բնական կազմուած մարդոյն և անդու հետաքննութիւն նորա զնոյն հաստատեն, թէ պարտ է մարդկան աշխատիլ և այնու փոքր ինչ հանգստանալ : Ահա՛ վասն այսորիկ և ոմն ՚ի փիլիսոփայից, անուն թաղէս, զորոյ զգովեստն տան բանք իւր և արարք, վճռեալ է թէ՛ « Սի լինիր գատարկանձն, թեպետ և լի իցես մեծութեամբ : »

Քանզի անակնկալ զիսպցն չիք գաղարումն և միշտ հասանին անակնկալ . վասն որոյ ոչ որ կարէ հաւատալ ոչ անձին առողջութեան, կորույս և ոչ բնչիցն և ոչ գանձուց իւրոց, զի և ոչ իսկ գիտէ զվաղուեան կենդանութեանն զստուգութիւն, կամ ոչ կարէ վտահիլ յայսմաւուր հարուստն թէ վաղիւն եւս իցէ՞ հարուստ . զի պատահի և արդէն իսկ բաղմաց պատահեալ է, զի առողջն յայսմ ժամու՝ տկարանայ ՚ի միւսումն, և ՚ի վաղիւն ՚ի հող տապանին հանգչի . և յայսմ աւուր հարուստն վաղիւն լինի թշուառ

30